

տերէն են, որոնց գիրերը ըստ բաւականի կը նմանին հին մաւրիտենական գիրերուն, ուրկէ սակայն, կը ծագի հին չփոթութիւն մը: Wiet յաջողեցաւ թափանցել մետալիոնները շրջապատող արձանագրութիւններուն գաղտնիքին. անոնք վկայեցին թէ թանկագին ասեղնագործութիւնը շինուած էր Ֆաթիմեան խալիֆա Ապտ-էլ-Գասսէմ Մուստալիի (1094-1101) և իր նախարարապետին (*) հրամանաւ, ինչ որ հարեանցի ըսենք թէ՝ ան աւելի թանկագին կ'ընէ անով որ՝ Ապտ էլ Գասսէմի անուամբ արձանագրութիւնները բացառապէս հազուագիւտ են: Ասեղնագործութիւնը՝ թող թէ, թուական ալ ունի: Կապոյտ թելերով արձանագրութիւններէն մին այս կերպով կը թարգմանուի. «Հիւսուածեղէնի մասնաւոր աշխատանոցին մէջ շինուած, ի Տամիէդ, 480 տարւոյն» (կամ 490 հէճրի), 1096 կամ 1097 քրիստոնէական թուականին:

Տաւիեդէն Apt. — Ի՞նչպէս բացատրել այս քողին ներկայութիւնը Aptի մայր եկեղեցիին մէջ: Եթէ յիշենք որ անոր շինութենէն երկու տարի վերջ երուսաղէմ զբաւուած էր Խաչակիրներու ձեռքով, ստոյգ կ'երեւայ ուրեմն որ առաջին խաչակրութեան ժամանակ Ֆրանսա տարուած էր ան: Ըստ Wietի, երեք կարծիքներ կարելի է բանաձեւել: Այս քողը 1097 ին Անտիոք հասնող եգիպտական պատգամաւորութեան մը միջոցաւ իբր նուէր ներկայացուած է. «պատուոյ վերարկուի» ընծաները նոյն ժամանակին յաճախակի կ'ըլլային, — կամ աւելի լաւ, ան յանձնուեցաւ Փրանկ գեսպաններուն որ 1098 ին կը բնակէին Գահրէ:

(*) Նախարարապետն էր հայագգի Շահնեան էլ - Աճալը, որդին՝ հուշակաւոր Պետր էլ ձէմալի: